ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

№ 38-Լ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ՆԵՐՔԻՆ ԳՈՐԾԵՐԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՓԵՏՐՎԱՐԻ 12-Ի N 15-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Հիմք ընդունելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածների՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ՝

1. Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարի 2025 թվականի փետրվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության ներքին գործերի նախարարության ոստիկանության ծառայողների վերապատրաստման, ոստիկանության գվարդիայի ծառայողների հատուկ պատրաստության և պարբերական վերապատրաստման կարգը և պայմանները սահմանելու մասին» N 15-Լ հրամանի հավելվածի՝

1) 5-րդ կետի 2-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«2) «Ոստիկանությունում ծառայության մասին» օրենքի (այսուհետ Օրենք) 14-րդ հոդվածի 6-րդ մասի 1-ին, 3-րդ, 6-րդ և 7-րդ կետերով, 7-րդ, 7.1-ին և 7.2-րդ մասերով նախատեսված դեպքերում պարտադիր վերապատրաստման ժամկետները որոշվում են ուսումնական պլաններին համապատասխան:».

2) 5-րդ կետի 4-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«4) Օրենքի 14-րդ հոդվածի 10-րդ մասով նախատեսված դեպքերում պարտադիր վերապատրաստման ժամկետը կազմում է առնվազն մեկ ամիս:».

3) 5-րդ կետի 8-րդ ենթակետը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«8) Գլխավոր խմբի պաշտոնում նշանակվելու համար ոստիկանության ծառայողները անցնում են վերապատրաստում, իսկ ծառայողական անհրաժեշտությունից ելնելով՝ պաշտոնին նշանակվելուց հետո ուսումնական պլաններով նախատեսված ժամկետներում:»:

4) 12–14-րդ կետերն ուժը կորցրած ճանաչել:

2. Սույն հրամանի 1–ին կետում նշված Օրենքի 7.1-ին և 7.2-րդ մասերով նախատեսված կարգավորումները գործում են մինչև Օրենքի 55.1-ին հոդվածի 6-րդ մասով նախատեսված կրթական ծրագրով համապատասխան որակավորմամբ ընդունելություն հայտարարելը:

3. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում հրապարակմանը հաջորդող օրվանից:

Ա. ՍԱՐԳՍՅԱՆ
09.06.2026թ.
ՀԱՍՏԱՏՎԱԾ Է
ԷԼԵԿՏՐՈՆԱՅԻՆ
ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅԱՄԲ